

նայն Հայոց, եւ Սինոզի սրբոյ Էջմիածնի տնօրէնութեամբը Հին - Նախիջեւանու հասարակութիւնը, օրերումս ստացան իրաւունք բանալոյ Հոգեւոր դպրոց Սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ սրահումը, ուր կային պատրաստուած վիճակային արդեամբ քանի մի յարմարաւոր սենեակներ. եւ որոյ հոգատարութեան համար հաստատուեցան ի սրահոն հոգաբարձութեան, նոյն քաղաքացի պարոնայր մահտեսի Մկրտիչ Թունեանց, Կարապետ Գասպարեանց եւ Ստեփան Սիմարեանց: Այլ եւ յիշեալ հասարակութիւնը եւս արժանացան Նորին Վեհափառութեան մի քաղցր խնամակալութիւնը վայելել, ընդունելով յօգուտ դպրոցին յիշեալ եկեղեցւոյ ունեցեալ 4000 ռուբլի դրամազկոյ մի միայն տոկոսիւրը:

Քարտուղար Հոգեւոր Կառավարութեան
Հայոց Հին - Նախիջեւանու

Գէորգ Յարութիւնեանց

ի 25 մարտի 1869 ամի

ի Նախիջեւան:

... ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Եւրբ Վեհափառ Կաթողիկոսը՝ նախնի սովորութիւնը վերանորոգելով՝ բարեհաճեցաւ Էջմիածնայ միաբաններէց մի քանիսն մեծ պահոց մէջ շրջակայ զիւղորայքը ուղարկել քարոզութեան, ինձ վիճակեցաւ Երեւանայ Օանկիպասարու եւ Գառնիպասարու դաւառների ժողովուրդը:

Եյս դաւառները, որոնք մինչեւ այս օրս թէ բարոյապէս եւ թէ մտաւորապէս շատ յետ էին մնացած, այժմ շնորհիւ Գերապատիւ Մեսրոպ վարդապետի Ամբաստանց, որ տեղեցոյս առաջնորդն է, սկսել են հոգ տանել իրանց բարոյական եւ մտաւոր զարգացմանը: Գերապատիւ Մեսրոպ վարդապետն ամենայն սիրով եւ հնազանդութեամբ Վեհափառ Կաթողիկոսի հանրաշահ եւ ազգօգուտ տնօրէնութեանց եւ պատուիրանաց կատարմանը հետեւում է. ազգասիրական ոգեով վառուած՝ կատարում է նա իւր պաշտօնը եւ պարտաւորութիւնը. լրացնում է ժողո-

վրդան արդի ամենակարեւոր պիտոյքը. հաստատում է շատ զիւղերում դպրոցներ եւ նրանք բարեկարգում է յարստեւ արդիւնաւոր զարգանալու համար, որով եւ Նորին Վեհափառութեան քաղցր ակնարկութեանց եւ շնորհաց արժանի է գտնւում:

Թէեւ շատ զիտողութիւններ արած եմ այդ դաւառների մասին, սակայն նրանք թողում եմ յետոյ, միայն այսքանս առ այժմ խնդրում եմ Ձեր . . . խմբագրութեան՝ Երաբատի էջերի մէջ ղետեղել ի միւրթաւութիւն սրաից բարեկաշտ ժողովուրդոյ վերջիշեալ դաւառների, եւ ի խրախուսութիւն Նորին Գերապատուութեան, որից շատերն կ'յուսամ այլպիսի բարի օրինակներ առնելու են, եւ հետեւելու միշտ իրենց ազգին ջերմեռանդութեամբ ծառայել, ինչպէս որ իրենց կոչումն պահանջում է:

Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեան

ի 12 ապրիլի 1869 ամի

ի զիւղն Վալին

(երբեմն մայրաքաղաք Հայոց):

Եյս անգամ այլ եւս տեղ չ'ունենալով, Կարսէն եկած եւ ուրիշ մի քանի նամականիք յետաձգել պարտաւորեցանք:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Երկու հանգամանք մարդոց շօշափելի սխալանքի մէջ են ձգում. մէկ, երբ պատճառներ են վերադրում այնպիսի հանգամանքների, որոնք պատահած չեն. երկրորդ, երբ մի գործի օգտուէտ նպատակը չը սրոշած, նորա գործադրութեան կերպերի վերայ են խօսում:

* * *

ՆՊԱՏԱԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ուսուցանել, կրնանակէ սորվեցնել մի բան, իսկ կրթել, կրնանակէ վարժել մի բանի մէջ կամ